**Արձանագրություն 3**

ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վկայականների և մուտքի քարտերի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.12.2019թ.
ժ.10:30

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Արա Խաչատրյան /գնահատող/
Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
Հարություն Մուշեղյան /բացող/
Բացակայող անդամ՝ Հասմիկ Տոնոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

**1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին**

(Ա. Ավետիսյան)

1.1 «Իրինա Մելքոնյան» Ա/Ձ-ի և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Իրինա Մելքոնյան» Ա/Ձ-ն և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.3 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Իրինա Մելքոնյան» Ա/Ձ-ի և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի հայտերը գնահատել բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

**2. Գնահատման արդյունքների մասին**

(Ա. Ավետիսյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3 կետով ընդունված որոշումը «Իրինա Մելքոնյան» Ա/Ձ-ին և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ –ին հայտարարել ընտրված մասնակից:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.3 Ընտրված մասնակիցներին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

---------- Ա. Ավետիսյան /նախագահ/

---------- Ա. Խաչատրյան

---------- Հ.Մարտիրոսյան

---------- Հ.Մուշեղյան

---------- Ա.Սիմոնյան /քարտուղար/